ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

17 ՄԱՅԻՍԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Աղվան Հարությունյանը, Մեխակ Մեխակյանը, Վարդան Սամսոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Պապին Վարդանյանը,Սեդրակ Սաֆարյանը,Մանուկ Հովհաննիսյանը,Սամվել Գարսևանյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Հասմիկ Մելքումյանը

Լսեցին

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 17-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2017 թվականի նեյեմբերի 17-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի տեղական տուրք

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին
7.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
8.Հողամասերի օտարման մասին
9"Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանման մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՄԱՐՈՌ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու2017 թվականի նոյեմբերի 17-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.
1) որոշման հավելվածի 22-րդ կետի1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«1.Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար,իր որոշմամբ ստեղծում է մշտական գործող՝3 իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:»,
2)որոշման հավելվածի 23-րդ կետի1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
«1. Մշտական հանձնաժողովները լինում են՝
1) սոցիալական, առողջապահության,բնության պահպանության,գիտության, կրթության,մշակույթի և երիտասարդության հարցերի.

2) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի
3) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի.»:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԱԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, Ակունք համայնքի ավագանին որոշում է.
1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՒՍ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն << Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 4-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի տեղական տուրք և (կամ)

Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգի՝ ՀԿՏՀ համակարգչային ծրագրով,որը հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի kotayk-akunk.am ինտերնետային կայքը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՄԱՐՈՌ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի պահանջները Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՄԱՐՈՌ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41 կետի,համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Ակունքի համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները համաձայն հավելված 1 և հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի՝համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն«Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 15-րդ մասի«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի29-ի թիվ 1918-Ն որոշումը,միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ և 71-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, համայնքի հողերի օգտագործման սխեմային համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
1)աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի,
3)սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով համաձայն հավելված 3-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50/

ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1.Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները անվանել համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Համլիկ Մելքումյանը